


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի ապրիլին


(վերլուծություն)

2015 թվականի ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15718 գործարք, որոնց քանակը 2015 թվականի մարտ ամսվա համեմատ աճել է 2.9 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ նվազել 15.8 %-ով:

2015 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4110 օտարման գործարքի 75.8 %-ը կազմել է առուվաճառքը, 23.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.7 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 32.8 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի ապրիլին, 2015 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 4.3 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 6.7 %-ով:

2015 թվականի ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.2 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի ապրիլին, 2015 թվականի մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.7 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 29.4 %-ով:

2015 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2014 թ.	ապրիլ 2015 թ.	մարտ 2015 թ.
<b>Կենտրոն</b>	428000	428000	428000
<b>Արաբկիր</b>	356600	356600	356600
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	282700	282700	282650
<b>Նոր Նորք</b>	252500	253100	253100
<b>Ավան</b>	260200	260650	260550
<b>Էրեբունի</b>	250600	251900	251900
<b>Շենգավիթ</b>	256100	257050	256950
<b>Դավթաշեն</b>	275150	275700	275700
<b>Աջափնյակ</b>	249600	250000	249750
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	242000	243200	243100
<b>Նուբարաշեն</b>	155100	156750	156600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի ապրիլին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի մարտի համեմատ աճել են 0.02%-ով:

2015 թվականի ապրիլին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 341 բնակարան, որոնց քանակը, 2015 թվականի մարտի համեմատ, նվազել է 1.4 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 16.6 %-ով:

2015 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2014 թ.	ապրիլ 2015 թ.	մարտ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	115800	116000	116000
	Ապարան	57450	57650	57650
	Թալին	65850	65900	65900
Արարատ	Արտաշատ	96000	97800	97750
	Մասիս	115000	115800	115800
	Վեդի	100500	101200	101150
	Արարատ	75400	76000	75950
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	60100	60100
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	44850	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55200	55100
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550	128550
	Բյուրեղավան	108150	108200	108200
	Եղվարդ	109400	109350	109350
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109200	109200
	Արթիկ	66700	66800	66700
	Մարալիկ	40700	40750	40700
Սյունիք	Գորիս	122000	122950	122950
	Կապան	92500	93700	93700
	Սիսիան	91150	91950	91800
	Մեղրի	80900	81500	81500
	Ագարակ	46900	47200	47200
	Քաջարան	94650	94600	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	94900
	Եղեգնաձոր	125500	125600	125500
	Ջերմուկ	112900	112950	112900
Տավուշ	Դիլիջան	113150	114000	113900
	Իջևան	118300	118350	118350
	Բերդ	60200	60200	60200
	Նոյեմբերյան	49900	49900	49850
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի մարտի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 383 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 118 գործարք, մարզերում՝ 265 գործարք: 2015 թվականի ապրիլին, 2015 թվականի մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 7.3 %-ով, ընդ որում, Երևանում աճել է 2.6 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 11.1 %-ով: 2015 թվականի ապրիլին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.3 %-ով, ընդ որում, Երևանում՝ 2.5 %-ով, իսկ մարզերում՝ 17.4 %-ով:

2015 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2014 թ.	ապրիլ 2015 թ.	մարտ 2015 թ.
<b>Կենտրոն</b>	476100	476100	476100
<b>Արաբկիր</b>	383000	383000	383000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	295000	295000	295000
<b>Նորք-Մարաշ</b>	319200	319200	319200
<b>Ավան</b>	270500	270500	270500
<b>Էրեբունի</b>	239500	239750	239750
<b>Շենգավիթ</b>	255000	255000	255000
<b>Դավթաշեն</b>	276000	276000	276000
<b>Աջափնյակ</b>	250050	250050	250050
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	238000	238000	238000
<b>Նուբարաշեն</b>	150500	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի ապրիլին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2014 թ.	ապրիլ 2015 թ.	մարտ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի ապրիլին հանրապետությունում օտարվել է 1730 միավոր (799.74 հա) հող, որից Երևանում՝ 92 միավոր (6.06 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1119 միավոր (744.83 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.93 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 418 միավոր (38.31 հա), որից Երևանում՝ 53 միավոր (3.27 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 140 միավոր (8.13 հա), որից Երևանում՝ 32 միավոր (1.14 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 14 միավոր (5.20 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.71 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 4 միավոր (2.26 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 34 միավոր (0.94 հա),
- ջրային հողեր՝ 1 միավոր (0.07 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1455 միավորի (681.89 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 66 միավոր (2.98 հա), նվիրատվության գործարք՝ 258 միավորի (116.69 հա), որից Երևանում՝ 18 միավոր (2.89 հա) և փոխանակության գործարք՝ 17 միավորի (1.16 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.19 հա):

Հանրապետությունում 2015 թվականի ապրիլին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 26.2 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 68.7 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 6.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 29.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 237.53 հա, որից 236.79 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.8 %-ը կամ 274 միավորը (89.40 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 22 միավոր (0.44 հա), իսկ 80.3 %-ը կամ 1168 միավորը (590.85 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 42 միավոր (2.54 հա): 2015 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 13 գործարք (1.64 հա):

Ստորև ներկայացված է 2015 թվականի ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.01	9	0.20	12	0.23	2	0.08	0	0.00	29	1.93	11	0.53
Արագածոտն	1	0.22	0	0.00	0	0.00	3	0.23	70	40.27	1	1.48	17	1.43	1	0.10
Արարատ	9	11.37	2	0.12	17	0.95	11	0.35	108	67.19	1	0.02	42	4.03	2	0.03
Արմավիր	6	7.45	1	0.03	0	0.00	7	0.29	95	64.26	0	0.00	49	4.76	3	0.39
Գեղարքունիք	8	1.42	0	0.00	26	2.07	5	0.21	44	27.67	1	0.01	23	2.47	4	0.14
Լոռի	5	1.20	0	0.00	5	0.16	6	0.12	363	235.59	0	0.00	6	0.34	3	0.11
Կոտայք	42	44.81	1	0.002	9	0.46	6	0.61	77	60.52	0	0.00	62	4.98	9	2.03
Շիրակ	0	0.00	1	0.08	7	0.20	2	0.04	29	32.25	0	0.00	20	1.59	0	0.00
Սյունիք	0	0.00	1	2.65	2	3.95	4	0.13	13	8.66	2	0.05	7	0.62	1	0.002
Վայոց ձոր	6	7.16	0	0.00	0	0.00	1	0.002	46	21.88	0	0.00	3	0.29	0	0.00
Տավուշ	2	0.64	0	0.00	5	0.18	16	0.83	12	3.74	0	0.00	8	0.78	3	0.45
Ընդամենը	79	74.27	7	2.89	80	8.17	73	3.04	859	562.11	5	1.56	266	23.22	37	3.78

Ստորև ներկայացված է 2015 թվականի ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	12	0.18	0	0.00	7	0.06	5	0.12	10	0.26	0	0.00	1	0.01	2	0.14	7	0.10
Արագածոտն	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	3	0.47	1	0.22	0	0.00	0	0.00	2	0.25
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	39	12.79	9	11.37	2	0.12	17	0.95	11	0.35
Արմավիր	4	0.08	1	0.03	0	0.00	3	0.05	9	5.85	5	5.60	0	0.00	0	0.00	4	0.25
Գեղարքունիք	1	0.12	0	0.00	1	0.12	0	0.00	37	3.48	7	1.32	0	0.00	25	1.95	5	0.21
Լոռի	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	13	0.97	4	0.70	0	0.00	5	0.16	4	0.11
Կոտայք	4	0.027	1	0.002	2	0.005	1	0.02	53	45.03	41	44.00	0	0.00	7	0.45	5	0.58
Շիրակ	4	0.06	0	0.00	3	0.03	1	0.03	6	0.26	0	0.00	1	0.08	4	0.17	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	6.73	0	0.00	1	2.65	2	3.95	4	0.13
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	7.162	6	7.16	0	0.00	0	0.00	1	0.00
Տավուշ	5	0.22	0	0.00	3	0.09	2	0.13	18	1.42	2	0.64	0	0.00	2	0.09	14	0.69
Ընդամենը	32	0.70	2	0.03	16	0.31	14	0.36	202	84.42	75	71.01	5	2.86	64	7.86	58	2.68

2015 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք (3.26 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի ապրիլին, 2014 թվականի ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 9.1 %-ով: Ընդ

որում, Երևանում նվազել է 44.4 %-ով, իսկ մարզերում՝ աճել է 14.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 44.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 1.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	0.22	1400.0	1400.0	1400.0	35	11.69	365.0	12000.0	3718.0
Ապարան								86.5	2727.3	655.3
Թային						14	8.06	93.6	5494.5	780.0
Ծաղկահովիտ						6	13.23	79.5	1000.0	342.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	7	8.13	68.7	2560.0	1137.0	57	13.68	335.1	10833.3	2600.0
Մասիս	1	0.74	1012.7	1012.7	1012.7	5	1.07	200.0	11904.8	3085.7
Վեդի	1	2.50	70.5	70.5	70.5	44	21.58	207.0	10795.1	1772.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	4.06	77.0	77.8	77.3	46	27.11	294.3	9090.0	1216.0
Բաղրամյան	1	1.30	67.5	67.5	67.5	9	8.68	90.6	2561.1	880.0
Վաղարշապատ	1	0.24	1000.0	1000.0	1000.0	39	27.90	444.4	11764.7	1910.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						9	3.95	199.8	1875.0	455.5
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի	6	1.21	132.2	2257.7	840.9	18	3.31	51.1	2850.0	795.5
Սևան	1	0.11	719.4	719.4	719.4	9	2.84	52.2	2134.8	337.5
Վարդենիս						8	17.57	41.2	2575.1	420.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	2	0.12	1227.4	1233.2	1230.3	62	16.50	170.4	6424.2	600.0
Գուգարք	1	0.11	1241.1	1241.1	1241.1	9	3.43	234.6	6065.9	775.5
Սպիտակ						2	0.51	250.0	5555.5	706.4
Ստեփանավան						3	1.39	90.6	1686.6	382.0
Տաշիր	1	0.46	511.3	511.3	511.3	284	207.20	45.3	1384.4	180.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	14	7.58	97.4	975.6	349.3	42	25.45	279.3	11942.7	4013.3
Եղվարդ	26	35.42	111.4	2212.6	483.2	23	25.92	174.4	11971.8	2390.0
Հրազդան	1	1.00	642.5	642.5	642.5	12	9.15	130.5	10256.4	1170.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						17	14.28	252.0	1693.1	620.0
Ամասիա								40.9	261.0	130.0
Անի						10	16.84	110.6	546.9	454.0
Աշոցք								58.5	215.8	137.2
Արթիկ						2	1.14	79.4	1428.6	496.0
<b>Սյունիքի մարզ</b>										



Գորիս						3	0.04	92.6	1023.2	785.0
Կապան								120.0	841.6	400.0
Մեղրի						1	0.53	193.0	3000.0	750.5
Սիսիան						8	6.60	46.3	1977.4	590.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	7.16	78.1	135.4	97.7			125.0	10000.0	1850.0
Վայք						46	21.88	58.8	1430.7	615.0
Տավուշի մարզ										
Բերդ						6	1.08	213.3	3783.8	675.0
Իջևան	2	0.64	331.9	336.0	334.0	2	0.95	267.5	9454.5	1375.0
Նոյեմբերյան						3	1.27	46.7	7368.4	972.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի ապրիլին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						12	9804.0	130.7	22200.0	2585.1
Ապարան						2	2240.0	124.1	609.6	389.5
Թային						3	2290.0	63.2	1454.8	152.6
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	8649.4	534.8	687.5	555.6	12	12626.0	173.9	7140.3	904.0
Մասիս	5	225.4	3114.8	4440.0	3566.6	18	16655.9	187.5	25000.0	1210.0
Վեդի	2	662.6	1300.0	2250.0	1775.0	11	9868.5	126.1	5000.0	664.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	21269.0	131.6	9090.9	1214.2
Բաղրամյան						2	1650.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						29	24638.0	197.4	26528.4	1530.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3770.0	186.6	1084.3	683.7
Ճամբարակ						2	2400.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	16	18748.0	188.1	833.3	489.5	15	16118.0	119.3	5000.0	281.6
Սևան								240.0	3110.4	330.0
Վարդենիս	9	752.0	600.0	600.0	600.0	2	2460.9	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	217.4
Գուգարք	5	1632.0	258.0	2297.3	1717.0	3	545.3	77.9	14083.3	1260.4
Սպիտակ								104.9	1348.3	207.6
Ստեփանավան						2	2805.7	88.2	1666.7	176.0
Տաշիր						1	94.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	1035.0	1543.5	2375.2	1959.4	35	27409.7	264.5	35353.5	1995.3
Եղվարդ	5	3470.0	1279.5	3234.0	2743.6	23	18491.7	173.6	27000.0	2863.0
Հրազդան						2	1812.0	117.7	34848.5	1317.1

Շիրակի մարզ										
Ախուրյան	4	1746.1	174.2	4392.7	2352.5	9	9845.0	113.6	18750.0	336.0
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						2	1587.2	67.9	180.6	196.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						8	4462.7	111.8	5000.0	219.0
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	366.0
Կապան	2	39492.4	115.2	115.2	115.2	1	1224.0	67.9	2638.9	343.0
Մեղրի						4	3190.9	68.5	632.9	246.5
Սիսիան						2	1820.0	123.5	875.0	233.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	2376.8	96.7	7659.6	508.3
Վայք						1	550.0	120.7	1448.3	245.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	364.7	75.8	810.0	125.3
Իջևան						4	3082.5	74.1	14423.1	529.2
Նոյեմբերյան	2	900.3	445.5	900.0	672.7	2	3142.1	125.0	1948.1	246.5

2015 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 613 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 79.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի ապրիլին, 2015 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.9 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 10.2 %-ով:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 39 բնակարանի, 50 անհատական բնակելի տան, 291 հասարակական և 52 արտադրական նշանակության օբյեկտի, 158 հողի, 21 ավտոտնակի և 2 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 7 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի մարտի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ նվազել 12.5 %-ով: 2015 թվականի ապրիլին հանրապետությունում վարձակալված 507.35 հա հողից 0.09 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 507.27 հա հողից 505.46 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.03 հա արդյունաբերական օբյեկտի, 0.32 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 384.99 հա, որից 384.98 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1488 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 9.5 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի մարտի համեմատ, նվազել է 5.1 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 38.9 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.8 %), անհատական բնակելի տների (23.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.9 %) և հողերի (11.8 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 787 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի մարտի համեմատ նվազել է 9.9 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 42.7 %-ով:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում գրավադրվել է 1347.26 հա հող, որից 13.00 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 98.8 %-ը կամ 1330.43 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 1225.34 հա, որից 1225.22 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 140 գործարք: 2015 թվականի ապրիլին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի մարտի համեմատ, աճել է 20.7 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 41.2 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 102 գործարք, որը 2015 թվականի մարտի համեմատ աճել է 13.3 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 28.7 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի մարտի համեմատ աճել է 46.2 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 60.0 %-ով:

2015 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 2044 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի մարտի համեմատ, աճել է 13.6 %-ով, իսկ 2014 թվականի ապրիլի համեմատ՝ 2.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 13.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (28.7 %):

## **«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**